

3808

Հրիստ Ա.  
ՀՀ Առողջապահ հոգ-  
յելության առաջ Ընդ

1502

891.71

4-96

Ա. ԿՐԻՍ


ՀԱՅՐ ՀԱՅՀԱԿԻ  
ԼԵՒ ՏԱԼՈՅՈՒ

ԿՐԵՑՑԵՐԵԱՆ ԱՕՆԱԾԻ  
ՎԵՐՋԸ

ԹԱՐԳԱՄԱՆՈՒՐԺԻՆ

Յ. Ա. ՌԻԿԵԱՆԻ

188



ՎԱՂԱՐԺԱՎԱՏ

Եղանգ պրով Ս. Էջմիածնի

1898

2003

Հայոց պատմութեան մասին պատմութեան մասին  
Ա. ԿՐԻՍ

891.4

4-96

ՏԵՇ ՏԵՂՄՈՒՆԻ

18 <sup>21</sup> / 11 98

ԿՐԵՑՑԵՐԵԱՆ ԱՕՆԱՏԻ

ՎԵՐԱԼ

4978  
4979

Թագավանութիւն

Յ. ՍԱՐԻԿԵԱՆ



ՎԱՂԱՐՃԱՊԱՏ

Տպարան ՄԱՅՐ ԱԹՈՒՐՈՅ Ա. ԷԶՄԻԱԾՆԻ

1898

2011

38025 ии

I.

Անդլիայում, կաթոլիկների մի վանքի  
եկեղեցում, Տիրամօր պատկերի առաջ չու-  
գած՝ լուս և ջերմեանդ աղօթումէր բե-  
նեգիկան կարգի մի կրօնաւոր։ Նա միայն  
էր եկեղեցում որովհետեւ բոլոր խոստովա-  
նողները հեռացել էին արդէն։ սակայն հայր  
Վինցէնտը իր մաքուր և ձգնաւորական կեան-  
քի, խելացի ու մարդասէր մոքերի շնորհիւ  
սիրուած ու յարգուած էր շրջակայթումն ուստի  
և միշտ բազմաթիւ էին նրան խոստովանող-  
ները։ Այս անգամ էլ միայն մի քանի բոսէ  
անցնելուց յետոյ, հեզիկ կերպով մօտեցաւ  
նրան ու հագնուած մի կին և երկիւղածու-  
թեամբ դիպաւ նրա զգեստին։ Նա շուռ եկաւ  
և զարմանքով տեսաւ իր մօտ կանգնած կանանց  
մենաստանի միանձնուհիներից մէկին։ Միանձ-  
նուհու ներկայութիւնն այդ վանքում այն-  
քան անապանելի էր որ կրօնաւորն ըստ երե-

Дозволено цензурою, 27 Февраля 1898 г. г. Тифлисъ.

2402-60

ւոյթին շփոթւեց, բայց և իր անկեղծ բարութեամբ լի և մեղմ ձայնով ասաց.

— ինչու ես եկել, աղջիկս.

Պարզ էր, որ այս թշուառ կինը ֆիզիքապէս ու բարոյապէս շատ էր տանջւել օրովհետեւ կուրծքը երկու ձեռքով ամուր սեղմել էր, իսկ ջղային գողը փոխել էր նրա դեմքը, որ չնայելով երկար տարիների զգալի հետքերին, խոր վշտին և նրան այլանգակող խոշոր սպիներին, դեռ ևս պահպանել էր երբեմնեան գեղեցկութեան հետքերը. կրօնաւորն այս ամենը միանգամբ նկատեց, ինչպէս և գեմքից հասկացաւ, որ այդ անսպասելի այցելուն ազգով ռուս է: Հենց այդ բոպէին միանձնուհին թուլացաւ և անզգայացած կընկնէր, եթէ կրօնաւորը նրան չօգնէր:

Հայր վիճենար չուզելով օգնութեան կանչել իր միարանակիցներից, որով թերեւս մի այնպիսի գաղտնիք բանար, որ խեղճ կինը աշխատել էր ծածուկ պահել շատերից, ինամբով նստեցրեց նրան և սկսեց ուշքի բերել: Մ' քանի բոպէից յի առյ միանձնուհին համապատասխան և աշքերը բացած կրօնաւորին

էր նայում, կարծես չզգալով՝ թէ ուր է ինքը և ում հետ:

— Սպասիր, աղջիկս, նախ հանգստացիր և կատարեալ ուշքի եկ:

Նա հնազանգւեց և միառժամանակ անխօս նստած էր, վերջապէս լռութիւնն ընդհատեց, նրա ձայնը մեղմ էր և անուշ:—

— Հայր սուրբ, ասաց նա, եկել եմ քեզմատ, որ գու ինձ փրկես հենց ինձնից:

— Աղջիկս, ասաց կրօնաւորը, ես կարեկցորէն կլսեմ խոստովանութիւնդ և կաշխատեմ հաշտեցնել քեզ Ողորմած Աստուծոյ հետ:

— Հայր սուրբ, բաւական տարիներ եմ անցրել մեր վանքում, բայց երբէք այն, որ իրուե մի ծանր բեռ ճնշումէ հոգիս, չեմ խոստովանել: Ամբողջ կեանքս վանքում կեղծիք է, որովհետեւ սիրոյ և խաղաղութեան փոխարէն, որոնք պիտի տիրէին իմ սրտին, իմ մէջ թագաւորում է ատելութիւն դեպի ինձ սպանող տղամարդը և ընդհանրապէս արհամարհանք գեղիքի բոլոր մարդիկ: Մինչեւ այժմ իմ հպարտ հոգին գեմ էր խոստովանելու,

բայց այժմ զգումեմ, որ հոգուս բոլոր գաղտնիքները բանալու և մեղքերիս թողութեան համար Աստծուն ջերմ ազօթելու ժամը հասել է: Ես գիտեմ, որ գուք սուրբ մարդ էք, ձեր կեանքը լիքն է անձնուիրութեան և բորութեան օրինակներով, ուստի զգում եմ, որ ձեզ միայն կարող եմ հաղորդել կեանքիս պատմութիւնը: Ոլքան էլ մեղաւոր լինեմ, այնուամենայնիւ այնքան եմ տանջւել որ այսուհետեւ մարդիկ ինձ աւելի պիտի կարեկցեն, քան յանդիմանեն:—

—Ոլքան էլ մեծ լինեն քո մեղքելը, նրանք կներւեն, ասաց կրօնաւորն այնպիսի ձայնով, որ անբաղդ կնոջ վիրաւոր սիրտը մի ինչ որ բերկրառիթ քաղցրութիւն զբաց:

II.

—Դուցէ ոչ մի կին, սկսեց նա իր խոստովանութիւնը, իր կեանքում չէ քաշել այն, ինչ որ ինձ էր վիճակուած: Իմ տանջանքներով լի կեանքը անսպասելի կերպով վերջացաւ դաշոյնի մի հարուածով, իսկ մի կաթոզին համ-

բոյր ինձ կրկին կենդանացրեց: Բայց չըշտապեմ, այլ պատմեմ կարգով:

Ես մի ուսւ կալուածատիրոջ աղջիկ եմ: Հայրս կաթոզիկ էր, կրթւել եմ վանքում և կեանք մտել առանց նրա գործնական կողմի վրայ ամենափոքր հասկացողութիւն անդամ ունենալու: Իմ զբայուն և բանաստեղծական բնաւորութիւնը բոլորովին իդէալական և երազող կերպարանք ստացաւ: Երբ աշխարհ մտայ, ես մի միամիտ մանուկ էի: Թէպէտ ես օժիտ չունէի, բայց իմ գեղեցկութեան և, ինչպէս ամենքը հաւատայնում էին, արտակարդ արժանաւորութիւններիս շնորհիւ, շատերն էին պտտում իմ շուրջը: Անհոգ էր կեանքս, քանի չէի ծանօթացել այն մարդու հետ, որ պիտի սպանէր ինձ: Նրան անուանում էին, Պողոնիշեռ . . . բայց . . . ինչո՞ւ, հայր սուրբ, դուք ցնցւեցիք . . . գուք լսել էք նրա պատմութիւնն ու անունը: Եթէ մինչեւ անդամ յայտնի էլ է ձեզ, այդ՝ իր կնոջն սպանողի պատմութիւնը, այդ միայն մի երեսն է: իսկ ես կը պատմեմ երկրորդը: Հանգստացէք, հայր սուրբ, գուք մահու չափ գունատւեցիք: Զեր

առաջ կանգնած է, ոչ թէ այն կնոջ ուրուականը, որին Պօղբնիշել և ամբողջ աշխարհը մեռած են համարում, այլ հէնց ինքը։

— Շարունակի՞ր, աղջիկս, ասաց կրօնաշնաւրը, հազիւ զապելով իր շփոթութիւնը։

Այդ Պօղբնիշեն ինձ վրայ բոլորսին այլ տպաւորութիւն թողեց, քան իմ բոլոր միւս երկրպագուները. նա կանանց հետ վարւում էր մեծ յարգանքով և դիւթիչ քնքշութեամբ. ես անմիջապէս ընկայ նրա ազգեցութեան տակ, առանց կասկածելու, որ այդ զրաւիչ վարմունքն արդիւնք է նրա կանանց հետ ունեցած մօտիկ ծանօթութեան և հեշտասիրութեան։ Ամեն մի մատաղահաս աղջիկ՝ իմ խառնուածքում (ՏԵՄՊԵՐԱՄԵԴԻ) ընդունակ է հեշտութեամբ անձնատուր լինելու իրեն դիւր եկողին։ Այդ իլլիւզիան ոչնչանում է միայն գտան փորձից յետոյ, իսկ այդ դառն փորձն ինձ համար ամուսնութիւնն էր։ Նոյն իսկ այժմ, երբ այդ ամենը մոռանալն ինձ համար բաղդաւորութիւն է, ակամայ յիշում եմ, թէ որքան ուրախ էի այն անմռանալի երեկոյին, երբ ես Պօղբնիշել հարսնացան

գարձայ։ Կարծես աչքիս առաջ պատկերանում է, թէ ինչպէս՝ մենք լուսնեակ գիշերները զրօսնում էինք նաւակով. կարծես այս րոպէիս հնչում է ականջիս նրա՝ իմ ծամերով յափշտակւելու ջերմ արտայայտութիւնը. և ինչպէս էր հաւատայնում, թէ ես միակն եմ աշխարհում որին սիրում է ինքը։ Բայց յիշում եմ և այն, թէ մեր պատկից յետոյ ինչ արհամարհանքով էր խօսում այդ գիշերի մասին։ Նա տսում էր, որ եթէ լուսինը, իմ ծամերը և այնքան վայելուչ զգեստներս չլինեին, իր ուրը չէր կորցնիլ։ Նա իրաւունք ունէր, քանի որ տղամարդիկ սիրում են կանանց նրանց արտաքին գեղեցկութեան և հլուհնավանդութեան համար։ Գուցէ շատ կանայք բնազգմամբ այդ հասկանում են, բայց ոչ մի միամիտ աղջիկ առաջուց երեսկայել չէ կարող այն բարոյական վիճը որի մէջ շատ անգամ գլորուում է այն տղամարդի ձեռքով, որ Տիբոջ պատկերի տռաջ երդւել է յարգելու պաշտպանել իր ինոջը։ Ես նրան սիրում էի անսահման սիրով և մանկական հաւատով և անհամբեր սպասում էի մեր պատկին՝ որ-

պէս մի վսեմ՝ և սրբազան վայրկենի, որն ինձ  
իրաւունք պիտի տար ընդ միշտ կապւելու  
նրա հետ մի գաղափարական և մշտական եր-  
ջանկութեամբ։ Սակայն այդ ժամանակամիւ-  
ջոցը կեանքիս ամենաերջանիկ շրջանը եղաւ։  
Թէպէտ այդ ժամանակ էլ նա կարեոր էր  
համարում թունաւորել իմ բարդաւորութիւ-  
նը։ Երբէք մոռանալ չեմ կարող այն սարսա-  
փելի րոպէն, երբ նա ցոյց տւեց ինձ իր յի-  
շատակարանը։ այդտեղ նա այնքան զգւելի էր,  
որ փոքր իշտէ փորձուած կինը ընդ միշտ  
կհրաժարւէր նրանից։ բայց ես միտմիտ մա-  
նուկ էի և սիրում էի նրան, ուստի ամեն  
բան ներեցի՝ հաւատացած լինելով, որ դէ-  
պի ինձ տածած սէրը բոլորովին կրաքե-  
փոխէ նրան, որ նա այլ ես անընդունակ է  
իւր միշած տգեղ քայլերն անելու։ Ո՞չ, ի՞նչ  
սոսկալի իլլիւզիա . . . որպիսի՝ կուրացումն է  
այն, որին մարդիկ սէր անունն են տալիս։  
Այն վայրկենական ատելութիւնը, որ ինձ-  
նում առաջացաւ նրա օրատետրը կարդա-  
լուց, անմիջապէս կորաւ և ես ամրողջապէս  
նւիրւեցի հարսանիքի պատրաստութիւննե-

րին։ Վերջապէս այդ այնչափ ցանկալի գէպըը  
վրայ հասաւ։ Բայց ամուսնութեանս սկզբի  
օրերն իմ մէջ մի գառն հիասթափութիւն  
առաջ բերին։ Փոխանակ երկու սիրող էակ-  
ների սրտերը ձուլւած և գաղափարական կա-  
պով կապւած տեսնելու, ես զգացի, որ ամու-  
սին եմ գարձել մի հրէշի, որին միմիայն ար-  
համարչել և ատել կարող եմ։ Նա հետեւում  
էր իմ ամենափոքր արարքներիս վայրենի  
խանգոտութեամբ և ամօթարեր կասկածով։  
Ես շատ լաւ յիշում եմ թէ ինչպէս՝ երբ  
անկարող էի լինում ծածկել զգացմունքներս,  
աշխատում էի գոնէ ցոյց տալ, որ իբր թէ  
մայրս է միտս ընկել։ Բայց երբ նա սկսեց  
կամակոր, քմահաճ անւանել ինձ և յանդի-  
մանել, ես լացը թողած այնպէս բարկացայ,  
որ նա ապշեց։ Այդ մեր առաջին վէճը եղաւ  
և այնուհետև մեր մէջ բացւեց մի անանցա-  
նելի վիճ։

Նա ծանր շունչ քաշեց և մի րոպէից  
յետոյ կրկին շարունակեց։

— Առաջին կռւին յաջորդեց երկրորդը՝  
երրորդը և այդպէս մենք հետզետէ աւելի  
ու աւելի էինք սառչում միմեանցից։ Հասկա-  
նալի է, որ այդպիսի պայմաններում ինձ նման  
մատաղահաս և միտմիտ արարածի կեանքը կա-  
տարեալ զժոխը պիտի գառնար։ Պօզդնիշելի

ղիւական խանդն այնքան զօրացաւ, որ նա սկսեց կասկածել ինձ հետ խօսող ամեն մի տղամարդու վրայ: Նրա համար գառն էր, որ ես առաջին մանկանս համարում էի կետնքիս միակ սփոփանքը: Դրանից յետոյ ես ուրիշ երեխաներ էլ ունեցայ, ընտանեկան հոգ սերս աւելացան: առողջութիւնս և որ ամենից գլխաւորն է, նեարդերս քայլայւեցին, այնպէս որ կմեռնէի, եթէ մեր տանու բժիշկը չինէր: Նա ինձ խորհուրդ աւաւ միասնակ ֆիզիքական ու բարոյական հանգիստ վայելել. այդ բանն աւելի կատաղեցրեց Պօզդնիւթեան, որ չէր ուզում ինձ մօտ թողնել այդ նրա կարծիքով անպիտան բժիշկներին: Բայց այս դէպքում ես հաստատ մնացի վճռիս և իմ հայրենական տանը երեք ամիս մնալուց յետոյ միայն՝ կազդուրւած և ուրախ վերագրարձայ նրա մօտ: Այնուհետեւ ես կարողանում էի տանել նրա անարդարութիւններն ու կոպտութիւնները: Ես նորից սկսեցի հետաքրքրել այն բանով, ինչ որ ամուսնութիւնից առաջ ինձ զուարձութիւն էր պատճառում: Ես լուրջ կերտով նւիրւեցի երաժշտութեան և կարճ ժամանակում առաջնակարդ գաղաքական համարձայ:

Այս ամենը զիւր չէր գալիս Պօզդնիւթեան: նրա կասկածոտութիւնն ու կոպտու-

թիւնն օրէ ցօր աւելանում էր, իսկ ես արդէն սովորել էի անտարբեր և անուշագիր լինել նրա յանդիմանութիւնների նկատմամբ: Ես լաւ եմ յիշում: թէ ինչպէս մէկ օր նա ինձնից գժգոհ հեռանալիս շշնջաց: «անիծւածը հետպհանումէ»: Յիշում եմ նոյնպէս, որ այդ բառերն իմ մէջ ինչ որ օտարութիւն և ուրախ զգացմունք առաջ բերին: Ես ուրախ էի, զգալով, որ բռնակալս անկարող է ոչնչացնել զոնէ գեղեցկութիւնս: Այսպէս անցնում էին օրերս, երբ բոլորովին անսպասելի կերպով հանգէս եկաւ ծրուխաւեսկին, որին վիճակւած էր բոլորովին յեղանգիսել կեանքս: Մեր առաջին ծանօթութեան բոլոր մանրամասնութիւնները շատ թարմ կերպով պահպանել են յիշողութեանս մէջ: Նրա մասին ես Պօզդնիշեցից շատ էի լսել բայց մեր ամուսնութեան օրից նա ապրումէր Փարիզում: Այն երեկոյին, երբ նա առաջին անդամ եկաւ մեզ մօտ, ես սովորականից աւելի ուրախ էի զգում ինձ:

Այս չէր նշանակում, ի հարկէ, թէ ես ուզում էի նրա վրայ արտասովոր տպաւորութիւն թողնել այլ ուղղակի հետեամբ էր իւրաքանչիւր կին արարածի հաճելի լինելու բնազդի: Ես յիշում եմ նոյնպէս, թէ որքան մեծ եղաւ իմ զարմանքը երբ Պօզդնիշել սի-

ըալիր կերպով խնդրեց Տրուխաչեսկուն բերել հետք նաև իր ջութակը ինձ հետ մի քիչ նուագելու։ Ես իսկոյն հասկացայ, որ դրանով նա ուզում էր փորձել ինձ, և իւր կնոջն օտար տղամարդու շրջանում դիտելու առիթ ունենալ։

Տրուխաչեսկին յատկապէս այն մարդկանցից էր, որոնց կանայք սիրում են, իսկ տղամարդիկ տառւմ։ Վերջինների հետ նա վարւում էր շատ սառն և սուր, իսկ կանանց հետ ընդհակառակն, շատ մեղմ և քնքոյց։ Նա գեղեցիկ էր, և չնայելով, որ օժտած էր երաժշտական հանձարով, այնու ամենայնիւ ուրիշներից պակաս պճնատէր չէր։ Նրա հեռանալու հենց առաջին գիշերը ևս համոզվեցի, որ, եթէ հանդամանքները ներեն, այդ երաժիշտը կարող է մեղմացնել կեանքիս դառնութիւնը։ Ապագայի մեր յարաբերութիւններն ինձ համար պարզ չեին, բայց ես զգում էի, որ նրա հետ ծանօթանալով, այլ ևս առաջւայ պէս մենակ չեմ աշխարհում։ Միայն վերջերում ես իմացայ, որ նոյն զգացել էր և Տրուխաչեսկին։ Մեր այս փոխադարձաբար զգացածները կարդաց արդեօք Պօզդնիշել մեր գէմքերի վրայ զդիտեմ, բայց նա մեզ ուշադրութեամբ հետեւում էր ամբողջ գիշերը։ և ես նրա գէմքի վրայ պարզ նկատում էի

ինձ ծանօթ արտայայտութիւնը։ Ինչ վերաբերում է ինձ, պէտք է ասած, որ վաղուց շաա վաղուց էր, որ այդչափ քաղցր երեկոյ չէի ունեցել, մանաւանդ, որ Տրուխաչեսկին ածում էր ինչպէս մի կատարեալ արուեստագէտ, իսկ ես մեծ բաւականութեամբ ձայնակցում էի նրան։ Հրաժեշտի ժամանակ նորից Պօզդնիշել սիրալիր կերպով խնդրեց նրան՝ որքան կարելի է յաճախ այցելել մեզ։ Այդպէս քաղցր հրաւիրում էր նա ամենայն անգամ, այնպէս որ նա սկսեց աւելի քան յաճախ այցելել մեզ։ Միանձնութիւն նորից լոեց և երկու ձեռքով ամսւր բռնեց կուրծքը։ Նրա աշքերը փակւեցին և շրթունքները մահու չափ գեղնեցին։ Հայր Վենցէնտը տենդային զրութեամբ նայում էր նրան։ Այդ վիճակում նա մեռածի էր նման։

### III.

Հազիւ տասն րոպէից յետոյ տարօրինակ այցելուն շարունակեց իր խոստովանութիւնը։ — Պէտք է խոստովանած, որ մի կէս տարի էլ չէր անցել, որ Տրուխաչեսկին իմ կեանքի փայլուն լուսատուն դարձաւ։ Նա ամեն կերպ աշխատում էր արտայայտել իր սէրը գէպի ինձ։ այնպէս որ շատ բնական էր, որ ինձ

պէս անբաղդ ու յուսախաբ մի արարած շուշով արձագանք պիտի տար նրա անկեղծ զգացմունքներին:

Մեր բարեկամութեան ամբողջ ընթացքումնա և ոչ մի տանու մատերմութիւն իրեն թոյլ չտուաւ: Երգւումեմ Աստուծով, որ մեր յարաբերութիւնները վերին աստիճանի անձեղ էին: Կեանքն ինձ համար նորից լցւել էր յոյսերով, բայց Պօղպնիշեկի խանդը ամարաւին ջինջ երկնքով վազող շանմի արագութեամբ պայթեց իմ գլխին: Տրուխաչեսկուն լսելու համար նա ձաշի հրաւիրեց մեր մի քանի ծանօթներին. այդ ձաշով այնքան էր հետաքրքրում: որ մէնիւն անգամ ինքը կազմեց. բայց երկու օրից յետոյ նրանում մի անսպասելի փոփոխութիւն առաջ եկաւ: Նա խիստ մռայլ և տխուր էր. ես գուշակեցի, որ խանդոտութիւնը նրան նորից տանջում է: Նա միշտ փակւում էր իր սենեակում: իսկ ես աշխատում էի՝ այսպէս թէ այնպէս փոխել նրա տխուր արամազրութիւնը: Մէկ օր էլ մտնելով նրա առանձնասենեակը, նստեցի նրա մօտ գահաւորակի վրայ. նա լուսութեամբ հանեց ծխախոտը և սկսեց ծխել. ես թեքւելով գէպի նա հարցրի. «Ի՞նչու, չէ՞նց որ նկատում ես, որ ես ուզում եմ իսօսել, ծխում ես». նա շուռ եկաւ ինձնից ատելութեամբ

և արհամարհանքով. իսկ ես շարունակեցի. «Եթէ չես ուզում, որ ես Տրուխաչեսկու հետ ածեմ չեմ անիլ. զրի՞ր մեր հիւրերին, որ ես հիւանդ եմ, պրծաւ, գնայց»: Բայց նա կատաղեց և սկսեց ամենակոպիտ հայշոյանք թափել զլիսիս: Նա հաւատացնում էր, որ ես խայտառակել եմ ինձ և արատաւորել իրեն անունը: Այս գեռ բաւական չէր, նա բռնելով ձեռքից կատաղած գոռաց:» կորի՞ր, եթէ ոչ քեզ կսպանեմ. ես գողալով միայն այսքանը կարողացայ ասել. «գու գժւել ես.» բայց այդ ժամանակ նա գլափի ինձ շպրտեց ծանր սրդմիչը, մումակալլ ելն. շարունակ գոռալով: «Կորի՞ր, կորի՞ր, եթէ ոչ կսպանեմ քեզ»: Ես փախսայ հարեան սենեակը և ուշաթափւեցի: Դորձը խաղաղութեամբ վերջացաւ. նա ներուզութիւն խնդրեց և համբուրեց ինձ, իսկ ես ներեցի նրան. նա խստովանեց, որ կասկածել է իմ և Տրուխաչեսկու վրայ: Այնուհետեւ վճռեցինք, որ հիւրերին կասկածի առիթ չտալու համար ճաշը գարձեալ կազմուի: Ես մտքում դրի պատահածն անպատճառ պատմել Տրուխաչեսկուն և տրւելիք ճաշըց յետոյ յարաբերութիւններս կտրել նրա հետ:

Առիթը չէնց երեկոյեան հանդիսացաւ, երբ նա եկել էր մօտ փորձի: Պօղպնիշել  
7.11.1922  
\* C.C.R.A. Խաչեան  
Ա. Աշուականա  
ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

տանը չէր: Միայն Աստծուն է յայտնի, թէ որքան ծանր էր ինձ համար հրաժարել նրանից և այդպիսով զրկւել կեանքիս միակ փայլուն ճառագայթից: Ես երբէք չեմ մոռանալ նրա գէմքի արտայայտութիւնը, որով լուսում էր իմ և Պօղոնիշևի մէջ տեղի ունեցած դէպքի պատմութիւնը: Ինչպէս մահւան դատապարտւած մարդը օգնութիւն է հայցում, այնպէս նա աղաջում էր ինձ փոխել իմ վճիռը, բայց ես անընկճելի էի և յայտնեցի, որ վաղը մենք կը տեսնենք վերջին անգամ: Հասաւ օրհասական այդ «վաղը»: Ծան անցաւ սովորականի պէս. բոլոր հիւրերը ներկայ էին. սկսւեց և խոստացած համերդը. ես նստած էի նւագարանի առաջ. սիրտս սաստիկ էր բարախում: «վերջին անգամ... վերջին անգամ...» դիպաւ ականջիս մի ինչ որ ձայն, որ թաղման կոչի էր նման: Ես սաստիկ յուզւած էի, ձեռքերս գողգողում էին: Անշուշտ Պօղոնիշև նկատեց այդ, բայց կարծում եմ, որ այդ նա կը բացատրէր այն հանգամնքով, որ ես առաջին անգամ լինելով մի հոչակաւոր արւեստագէտի հետ օտար հասարակութեան առաջ, շփոթւում եմ: Անկասկած նա նկատել էր և այն, որ ես և Տրուխաչևսկին շարունակ միմեանց էինք նայում: Արւեստագէտը դժգոյն էր որպէս մահը

և սաստիկ յուզւած, բայց դէմքի և ոչ միթելլ այդ չէր արտայայտում: Կնդկնդոցը շարժելիս նրա ձեռքերը չէին գողգողում: Մի անգամ միայն, որպէս թէ եղանակի վերաբերեալ բան է ուզում ասել, նա կոացաւ դէպի ինձ և թովիչ ձայնով ասաց. «Այս եղանակի ելեկջներում մեր հոգիները միանալու են:» Եւ ջշմարիտ, այդ երեկոյ մեր ներկայացրած պիէսն արտայայտում էր մարդկային հոգու ամբողջ տանջանկը: Դա թեահօվէնի սքանչելի «Կրէյցերեան Սօնսան» էր. թեահօվէնի, որ հոգու տանջանքներն արտայայտելում Շէկսպիրի չափ հմտւ վարպետ է. և եթէ երբ և իցէ գեղարուեսար սէր է արտայայտել, ապա՝ Տրուխաչևսկու քնարը շնչել է նրան: Ինչ վերաբերում է ինձ, պիտի ասեմ: որ ես յափշտակւած էի այն բուռն սիրով, որ արտայայտում էր ջութակի ամեն մի ելեկջը. այնպէս որ, նւագում էի բոլորովին մեքենայաբար: Միրած աղամարդու խաղն ինձ անուրջների աշխարհն էր տարել և ես ամբողջ գիշերը մնացի նրա կախարդական ազգեցութեան տակ:

IV.

Հիւրերի ցրւելուց յետոյ կատարելապէս յուսահատւեցի. նւագարանը ծածկեցի և

և զգացի որ բոլորովին միայնակ եմ երկու  
օր շարունակ տանջում էի և զուր էի աշ-  
խատում երեխաների և տան հոգսերով մո-  
ռանալ ցաւերս: Յանկարծ երրորդ օրը Պօղո-  
նիշեր յայտնեց, որ ինքն ստիպուած է մի  
շաբաթով բացակայել տանից. նրա բացակա-  
յութիւնը թէպէտ ինձ ուրախացնում էր,  
բայց սովորաբար երկու օրից աւելի չեր  
տեսում: Նրա բացակայութեամբ ես շատ կու-  
րախանայի, եթէ Տրու խաչեսկուց բաժանւելու  
պատճառաւ այնքան տիրած ըլինէի: Հէնց  
Պօղոնիշեր գնալու օրը ես մի նամակ ստա-  
ցայ. Տրու խաչեսկուց էր. նա յայտնում էր,  
թէ Պօղոնիշերին մինչեւ կայտրան ճանապարհ է  
ձգել, իսկ ինքը շուտով պիտի գնայ Փարիզ  
այլ ես Ռուսաստան չվերադառնալու նպա-  
տակով: Նամակի վերջում նա աղաջում էր,  
որ թոյլ տամ իրեն հրաժեշտի համար  
ինձ մօտ գալու: Այնքան անկեղծ սէր էր  
արտայայտում նրա ամեն մի խօսքը, որ ին  
վճռականութիւնը տատանւեց և պատասխա-  
նեցի, որ երկրորդ օրը երեկոյեան կսպասեմ  
իրեն: Միանձնուիին կանգ առաւ և ծանր  
շունչ քաշեց.

— Թոյլ տէք, հայր սուրբ, հնար եղա-  
ծին չափ կրծատել կեանքիս ամենադառն րո-  
պէների պատմութիւնը, շարունակեց նա խուլ

ձայնով: Երկրորդ երեկոյեան Տրու խաչեսկին  
եկաւ: Ես զարմանում եմ, ինչու նախազգա-  
ցումն չյայտնեց, որ այդ երեկոն կեանքիս  
վերջին երջանիկ օրն է, որ մի քանի ժամից  
յետոյ ինձ սպասում է մի սոսկալի աղէտ:  
Երբ մտածում էի, որ շուտով պիտի բաժան-  
ւեմ իմ սիրած տղամարդուց, այդ թանկա-  
գին ժամերը նսեմանում էին աշքում: Ժա-  
մանակը շատ արագ և աննկատելի կերպով էր  
անցնում: Ինչպէս վրայ հասաւ ժամի 12-ը՝  
մենք չիմացանք: Այդ ժամանակ միայն մենք  
մտանք սկզբանատուն ընթրելու. բայց... յան-  
կարծ դռները բացւեցին և մեր առաջ կանգ-  
նեց Պօղոնիշերը: Նա մահու չափ զժողոյն էր  
և մի ձեռքը պահել էր յետեռում: Անշուշտ  
իմ և Տրու խաչեսկու դէմքի վրայ երեաց մեր  
զարմանքը, երկիւղը, գուցէ և անբաւակա-  
նութիւնը, որ տռաջ եկան այդ անսպասելի  
սիւրպրեզից: Առաջինը Տրու խաչեսկին ընդ-  
հատեց լուսթիւնը և ասաց. «Մենք երա-  
ժշտութեամբ էինք պարապում»: իսկ ես բա-  
ցականչեցի «սպասածից աւելի շուտ վերա-  
գարձար», Պօղոնիշեր գունատ շրթունքները  
լուս էին, բայց յանկարծ, աշխատելով դա-  
շոյնը թագինել Տրու խաչեսկուց, վայրենաբար  
յարձակւեց վրաս. անշուշտ, նա ուզում էր  
սպանել ինձ: Բայց Տրու խաչեսկին նկատե-

լով գաշոյնը, բռնեց Պօղպնիշեկի ձեռքը և աղաղակեց. «Բ՞նչ էք անում գժւել էք, ի՞նչ է... մարդիկ . . .». Երբ էք ոչինչ այնքան զղւելի չէր երեացել ինձ, որքան Պօղպնիշեկի դեմքը այն վայրկենին, երբ նա ազատւելով ծրու խաչեսկու ձեռքից, յարձակւեց նրա վրայ:

Զնայելով նրա կատաղութեանը և գաշյնի փայլին, ես միայն մի բանի վրայ էի մտածում—մի գուցէ սպանէ այն մարդուն, որն աշխարհիս երեսին ինձ համար ամենից թանին էր. այդ պատճառով բռնելով Պօղպնիշեկի ձեռքից, սկսեցի բոլոր ուժովս քաշել. նա աշխատում էր ազատւել իմ ձեռքից, բայց ես նրան այնքան պահեցի, որ ծրու խաչեսկին ժամանակ գտաւ ազատւելու: Այդ ժամանակ Պօղպնիշելը շուռ եկաւ և բոլոր ուժով խփեց երեսիս: Ես ճշացի և ընկայ թախտի վրայ, աղաղակելով. «Աստուած է վկայ, որ մեր մէջ ոչինչ չը կայ, ոչինչ, ոչինչ»: Իմ խօսքերը կարծես կրկնապատկեցին նրա չարութիւնը և կատաղած սկսեց ամուր սեղմել կոկորդս: Ես բոլոր ուժով աշխատում էի ազատւել նրանից, բայց յանկարծ նա գաշոյնով խփեց ձախ կողքիս: Այս ասելով նա ցոյց տւաւ այն տեղը, ուր գաշոյնը խրւել էր:

— Աստուած իմ, այդ օրւանից սկսած

ձիշտ այդտեղում ես շարունակ ցաւ եմ զգում: Ես երկու ձեռքով ամուր բռնեցի գաշյնը, մատներս կտրտեցի, բայց հարւածը հեռացնել չը կարողացայ: Այդքանով չը բաւականանալով, նա ինձ ձգեց յատակի վրայ և սկսեց ոտներով հարւածել: Կարծես յիշում եմ որ այդ բոպէին ներս վաղեց պառաւ գայեակը: Վելքիցս արիւնն առուակի պէս էր վազում: Ես անզգայացայ: Ուշքի գալով, ես ինձ մահճակալի վրայ տեսայ, իսկ սենեակս լցւել էր կարբուեան թթւուտի հոտով: Հազիւ էի բացել աչքերս, և ահա Պօղպնիշելը մօտեցաւ մահճակալիս և լուռ նայեց վրաս. նրան տեսնելուն պէս սոսկալի տեսարանն իր ամբողջ ահաւորութեամբ պատկերացաւ աչքիս առաջ և ես շշնջացի. «Դու ինձ սպանեցիր, երեխաներից ոչ մէկը քեզ չեմ տալ. նրանց քոյրս կը վերցնի. Ես ատում եմ քեզ, ես ատում եմ քեզ»: Այնուհետեւ զգացի, որ հետզհետէ սառչում եմ այնպէս որ ո՛չ շարժւել էի կարողանում և ո՛չ մի խօսք ասել. թէպէտ ամեն բան ինչ որ շուրջս կատարւում էր, հասկանում էի: Մահճակալիս մօտեցաւ իմ հին բարեկամ բժիշկը և բազկերակս շօշափելով ասաց. «Նա մեռել է»: Վրահասան թաղման սոսկալի պատրաստութիւնները. ինձ գաղաղի մէջ դրին. Աստուած իմ.

ինչ սարսափելի տանջանք. ինձ մեռած էին կարծում, իսկ ես չեի կարողանում յայտնել որ կենդանի եմ: Մթնեց. իսեղջ երեխաներիս տարան դուրս, իսկ ինձ ամբողջ գիշերը մենակ թողին: Մի քանի ժամից յետոյ ականջիս հասան երկու ձայներ. մինը պառաւ դայեկինն էր, իսկ միւսը Տրուխաչեսկունը: «Չեր պատէրն իւր փոխարէն ուղարկեց ինձ, որովհետեւ ինքը սաստիկ հիւանդ է» ասաց նա. Տրուխաչեսկին կաթոլիկ պատէրի վերարկու էր հագել: Պառաւը, որ նոյնպէս կաթոլիկ էր, չերմեռանդ կերպով խաչակնքեց և սենեակից գուրս գնաց: Տրուխաչեսկին մօտենալով դագաղիս, երեսիս ծածկոցը բարձրացրեց. «Ողորմած Աստուած», բացականչեց նա սարսափած և յետ քաշւեց: Երեի սյդչափ սարսափելի էի: Բայց յետոյ սառած ձեռքս քնքշութեամբ արորելով մրմրնչաց. «իսեղջիկ, ո՞վ կարող էր երեակայել». կարծես ելեքտրական մի հոսանք անցաւ մարմնովս. նա կռացաւ դեպի ինձ և արտասուրքի մի տաք կաթիլ ընկաւ թշխս վրայ. այդ կաթիլն ինձ կենդանացրեց: Վերջին ուժերս հաւաքելով ասացի. «ազատիր ինձ»:— «Ողորմած Աստուած», բացականչեց նա, «որան կենդանի են թաղում»: յետոյ գլուխս բարձրացնելով, աւելացրեց. «Փառք Աստու-

ծոյ, որ ես ժամանակին եկայ. բայց զգուշացիր, թէ ոչ ամեն բան ի զուր կանցնի. մի ժամից յետոյ ես կվերագառնամ և դու իմը կը լինիս, իմը կը լինիս յաւիտեան»:

Նրա խօսքերն ինձ վերացրին. սարսափելի գագաղը, որի մէջ ես կեանքիս ամենաշգւար ժամանակին անցրի, ինձ համար քընքոյշ և փարիտամ օթեակ դարձաւ. օրհասական վիճակս և տանջանքներս մօռացայ և միայն մի բան էի զգում—որ մեռայ և գրանով իմ սիրած մարդուն ձեռք բերի:

Ես սպասում էի Տրուխաչեսկու գալուն. յանկարծ սենեակ մտաւ պառաւ դայեակը. ես վախենում էի, թէ մի գուցէ նա լոէ սըրտիս զարկերը: Բայց նա հանդցրեց մոներից մի քանիսը, վառեց նորերը և հեռացաւ սենեակից: Իսկ երբ վերագարձաւ Տրուխաչեսկին, այնքան զգոյշ ներս մտաւ, որ ես նրան չնկատեցի, մինչեւ որ մօտենալով ինձ, ցածր ձայնով ասաց. «սիրտ առ, իմ աղաւնեակ, մի քանի րոպէ ես, և ամեն ինչ կը վերջանայ»: մի քանի րոպէ ես, և ամեն ինչ կը վերջանայ»: Սա զրեց գագաղիս մօտ մի շատ ծանր պարկ, իսկ ինձ առաւ ձեռքերի վրայ: Ես ուշաթափւեցի և ուշքի եկայ միայն կառըում: Վերջը միայն իմացայ, որ Տրուխաչեսկին դագաղիս միայն իմացայ, որ Տրուխաչեսկին դագաղիս մէջ կապարով լիքը մի պարկ էր գրել և կամ գագաղիս վակել ու ամրացրել էր: Այդ բոլորական վակել ու ամրացրել էր:

ըից յետոյ նա գտնելով պառաւին յայտնելւ սրտատրոփ սպասում էի նրա նամակներին։ Էր՝ որ դագաղն այլ ևս անկարելի է բանալ, նցեալն ինձ մի ահոելի երազ էր թւում։ որովհետեւ զիակն սկսել է քայքայուել և բանալ էս երեխաներիս անգամ մոռացայ և զգում ցի դրանից սրբազզութիւն կը լինէր, եթէ էի, որ մեռեներից եմ յարութիւն առել։ Խեղձ կոչը ենթարկեն սրա նրա հետաքրը Դեղեցկութիւնս միշտ ինձ մի տեսակ հպարտ քրութեանը։ Պառաւը խաչակնքելով յայտնել ինքնաբաւականութիւն էր պատճառում և էր, որ նրա բոլոր հրամանները կը կատարւին։ այդ իմ ամենամեծ թերութիւնն էր, այդ վերջապէս ծրուխաչեսկին շտապով հեռանաւով նստել էր կառք և հրամայել կառապանին հնար եղածին չափ արագ քշել։

V.

Ես յետոյ միայն իմացայ, թէ ինչպէս նա ճանապարհին հանելով իւր վերարկուն, ինձ տարել էր մի մասնաւոր հիւանդանոց և յանձնել գթութեան քոյրերից մինի խնամքին։ Իմ հիւանդ ու թոյլ գրութեան պատճառով և ինձ փախցնելը գաղտնի պահելու համար նա ստիպւած էր այդպէս վարւել։ Դրանից յետոյ նա գնումէ Փարիզ, պատիւրելով գթութեան քրոջը՝ ինձ ևս այնտեղ տանել, հէնց որ ուժերս կներեն այդ ճանապարհորդութիւնը կատարելու։

Հետզետէ կազդուրւելս երբէք չեմ մոռանալ։ Այն յոյսը, թէ շուտով պիտի տեսնեմ Ծրուխաչեսկուն, ինձ կեանք էր տալիս

Այնուհետեւ ամենից աւելի ինձ սարսափեցնում էր այն միտքը, թէ Ծրուխաչեսկին այս գրութեամբ կարող է ինձ ատել։ Ես իմ նամակներում յայտնեցի ինձ մաշող վիշտը և հանգստացայ միայն այն ժամանակ, երբ նա ամենաջներմ կերպով երդւեց՝ երբէք շը դաւաճնել ինձ։

Հասաւ Ռուսաստանից հեռանալու օրը և շուտով Փարիզում տեսայ Ծրուխաչեսկուն, որից յաւիտեան շը պիտի բաժանւէի։ Բայց երբ նրան այնքան գեղեցիկ և նւիրւած գտայ, նորից երկիւզ կրեցի, թէ մի գուցէ իմ այլանգակ գէմքը նրան վախեցնէ։ այդ պատճառով երկար ժամանակ երեսիս հաստ քօղը չէի բարձրացնում և բուռն սիրոյ ինքնամուացութեան մէջ էի։ Նա սեղմում էր ինձ իր

կրծքին, ջերմ կերպով փարում և սիրատենչ տեղ ճիգն եմ թափում մաքուր կեանք վաշնջում էր, որ ես իրենն եմ իրենն եմ յաւ-  
լիտեան: Դիանք ծայրայեղ բաղդաւորութեան  
ըռպէներ էին, բայց ... երկար չը տեսցին,

Սա լռեց. Նրա աչքերն ինչ որ անսովոր  
փայլ ստացան և ամբողջ մարմնով դողաց. նա  
հեղինական ժպիտով կրկին շարունակեց: Մի  
ակնթարթում ծայրայեղ բաղդաւորութիւնը  
փոխւեց անշափ յուսահատութեան: Բայց  
սիրտս այժմ քարի պէս սառն է, և ես կո-  
րող եմ յիշատակել անցածը, առանց յուզ-  
ւելու և ցաւելու: Երբ առաջին անգամ ես  
քօղս բարձրացրի, ծրուխաչեսկին սարսափա-  
հար յետ քաշւեց և չնայելով իր բոլոր ջան-  
քերին, չը կարողացաւ այդ սարսափը թագ-  
ցնել: Նրա գեղեցիկ դէմքը մթագնեց, նա  
ձեռքը ճակատին շփեց և խուլ ձայնով ասաց.  
«Թշուառ աղաւնեակո, ներիր, ես այնքան  
զարմացած եմ որ թոյլ տուր ինձ ուշքի  
գալ»: Ասաց ու հեռացաւ:

Ես այլ ես նրան չտեսայ. իմ դէպի նա  
ունեցած սէրը մի վայրկեանում տաելութեան  
փոխւեց և այլ ես, առանց նրա վերադարձին  
սպասելու, շատակեցի երկաթուղու կայարան  
և Փարիզից հեռացայ: Մի քանի ժամոնակից  
յետոյ ես եկայ Անդլիա և մտայ այս հարեան  
մենաստանը: Բաւտական ժամանակ է, որ այս-

ճիգն եմ թափում մաքուր կեանք վա-  
րել և դէպի մարդիկ ունեցած ատելութիւնս  
սահմահարել: Այժմ տեսնելով որ դուք սուրբ  
կը, ես նորից հաւատում եմ որ աշխար-  
եք, ևս նորից հաւատում եմ որ աշխար-  
եք կարող են և լաւ մարդիկ լինել, և  
առաջին անգամ ձեզ եմ բանում իմ սիրտը,  
ձեզ պատմում իմ գգրադդ անցեալը:

Հայր Աննցէնտը լուելեան նրա ձեռքից  
բանած տարաւ ու պատկերի առաջ, ուր  
միանձնուհին ծունկ չըքեց:

Յանուն չօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ  
ներւում են քեզ մեղքերդ, արտասանեց նա  
խոր զգացմունքով: Խեղձ կինն ընդհատեց  
նրան իր հեկեկանքով բայց յետոյ զգաց որ  
ինքը միսիթարուած է:

Աղջիկս, շարունակեց նա, երբ թշւառ  
կինը կանգնել և արտասաւքն էր սրբում, թէ  
ինձ և թէ քեզ այժմ մարդկային կրքերն ան-  
մատչելի են, բայց ես չէի ցանկանալ որ քո  
սրտում այդ մարդու դէմ ամենափոքր չափով  
անգամ գառնութիւն մնար: ես ցանկութիւն  
չունեմ նրան պաշտպանելու, որովհետեւ նա  
չունեմ նրան պատապանելու, որովհետեւ նա  
կա քեզ պէս սխալական է, բայց արդարացի  
ևս քեզ պէս սխալական է, բայց արդարացի  
թէ, որ նրան մեղադրում ես, թէ քեզ թա-  
շէ, որ նրան պատապանելու, որովհետեւ նա  
չունեմ և երբ որ համազւեց, թէ այլ ևս չի  
գտնելու, կոնսաւոր գարձաւ:

Բայց դուք ինչից գիտեք այդ, հարց միանձնուհին գողգոջ ձայնով:  
 Հայր Վենցէսալ փոխանակ պատասխանելու, ուղղակի նրա աչքերին նայեց. նրանց հայեացքները հանդիպեցին. բենեդիկտեան կրօնաւորի դէմքը կարծես փոխւեց և ժամանակի ու վշտի թողած հետքերը կարծես նրա վրայից անհետացան: Ի հարկէ, նրա մազերը ծերմակել ու նօսրացել էին: Երբեմնեան արուեստագէտի սպիտակ ձեռքերը կոշտացել էին, բայց աչքերը պահպանել էին իրենց նախկին դիւթիչ հրապոյրը, միայն թէ նոքա այժմ փայլում էին ոչ թէ երկրային սիրոյ տենչով, ինչպէս առաջ էր, այլ գաղափարական, մաքուր և երկնային լուսով:

Միանձնուհին ճանաչեց նրան և բարձրաձայն ճիշ արձակեց. երկար ժամանակ նրանք հիացած նայում էին իրար: Նրանք կարծես այժմ մի ուրիշ աշխարհի էակներ էին, որոնք հասկանալով կեանքի և մահու բոլոր գաղտնիքը, անտարբեր էին գէպի անցեալը: Նրանց աչքերում երկրային կրքերի հետք անդամը կար, Դրանով ի հարկէ նրանց սէրը ոչինչ կորցրեց, այլ գարձաւ սուրբ և նւիրական:

Այդ պատոնական սիրոյ ազգեցութեան հին էր երեսում այնպէս, որ նա չէր նկա-

տում ոչ նրա ծերութիւնը և ոչ այլանդակ դէմքը: Այդ երկու սիրողները, որոնք այնպէս այնքան տանջւել եւ այնքան ջերմ սիրել էին իրար, միանգամայն հասկացան, որ իրենց հոգիները միացած են յաւիտենական կապով: Վրանք նոյն իսկ և այդ նրանց բաւական էր: Նրանք նոյն իսկ ձեռք չմեկնեցին իրար. նրանց սէրն այժմ շատ և շատ վեց էր և անընդունակ երկրային սիրոյ արտայայտութիւններում:

Վերջապէս միանձնուհին ընկաւ ծնկների վրայ և լուս հայեացքով կրօնաւորի օրհնութիւնը խնդրեց:

— Թող օրհնէ քեզ ծերը՝ Հօր, Որդուց և Ս. Հոգւոյ անունով:

— Ամէն, աւելացրեց միանձնուհին ջերմեռանդութեամբ: Նոքա հեռացան իրարից, այլ ևս այս աշխարհում երբէք չը հանդիպելու պայմանաւ:

Միւս օրն ամբողջ շրջակայքը զարմանքով լսեց, որ ամենից սիրւած ու յարգւած է: Վինցէնտը թողել է իր վանքը: Զգարմացաւ միայն մօտիկ մենաստանի միանձնուհիցաւ մէկը, բայց իր գաղանիքը ոչ ոքի չը յայտնեց:

Միւտարուց յետոյ, կանանց մէնաստանի մի ընդարձակ խցումն մի միանձնուհի պատ-

3808

— 32 —

տառի վրայ մի սրբի պատկեր էր նկարում:  
իսկ նրան շրջապատող մատակ ազջիկները  
հիացած հետեւում էին նրա հմուտ ձեռքի  
շարժումներին: Յանկարծ վրձինը նրա ձեռ-  
քից ընկաւ և նա մեղմ ու ցածր ձայնով  
ասաց:

— Վերջապէս գու եկար ինձ տանելու:  
Նրա գլուխը խոնարհւեց կրծքին և խա-  
ղաղ ու քաղցր ժպիաթ լուսաւորեց նրա երե-  
սը. մատաղ ունկնդիրները զարհութեցին: տես-  
նելով նրա մահը:

Սոյն օրը վանքի վանահայրն ստացաւ  
հայր Վինցենտի մահուան հեռագիրը:  
Նրանք մեռան մի և նոյն ժամանակ:



2013

